

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/5

7 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանի 16.03.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 18.02.2015 թ-ի թիվ 522 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունը մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանի գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ 17.06.2003 թ-ին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել է Նոյեմբերյանի ՏՀՏ-ում, որի իրավահաջորդը ներկայումս հանդիսանում է Իջևանի ՏՀՏ-ն: 30.05.2005 թ-ին դիմում է ներկայացրել և դադարեցրել իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

Բացի այդ, պետական գրանցման վկայականի գործունեության ժամկետը ավարտվել է 01.01.2006 թ-ին, ինչը նշանակում է, որ այդ ժամկետից հետո հարկեր և այլ պարտադիր վճարներ չպետք է հաշվարկվեին:

18.02.2015 թ-ին Իջևանի ՏՀՏ պետի կողմից կայացվել է հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու վերաբերյալ թիվ 522 որոշումը, համաձայն որի Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանից ենթակա է գանձման 148.422 դրամ: Պարտքը վերաբերվում է պարզեցված հարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված գումարներին:

Պարզեցված հարկի գծով պարտքը կազմում է 47.835 դրամ, որի դեմ Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանն առարկություն չունի:

Ինչ վերաբերվում է 100.587 դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությանը, ապա ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներով նշված որոշումն այդ մասով ենթակա է անվավեր ճանաչման, հետևյալ պատճառաբանությամբ:

Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը 30.05.2005 թ-ին գրավոր դիմում է ներկայացրել այն մասին, որ լուծարման կապակցությամբ տրվի տեղեկանք, հարկային պարտավորությունների մնացորդի վերաբերյալ: ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 22.08.2005 թ-ի թիվ 1021981 հանձնարարագրի հիման վրա կատարվել է ստուգում և լրացուցիչ հարկային պարտավորություններ չեն արձանագրվել: Ստուգումից հետո տեղեկանք չի տրվել, իսկ Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը հետևողական չի եղել և այն չի պահանջել ու չի լուծարել վկայականը, նկատի ունենալով, որ պետական գրանցման վկայականի գործունեության ժամկետն ավարտվել է 01.01.2006 թ-ից:

Նման պայմաններում 2011 թ-ի դեկտեմբերից մինչև 2012 թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարներ չպետք է հաշվարկվեին:

Ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ 30.05.2005 թ-ի դիմումը ներկայացնելու պահին վկայականը հանձնելու վերաբերյալ օրենքը դրույթ չի պարունակել:

Վկայականը հանձնելու և գործունեություն չիրականացնելու պայմանով նվազագույն սոցիալական վճարներից ազատելու «Պարտադիր սոցիալական ապահովագրության

մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված դրույթը գործել է 2006 թ-ից, որի մասին գանգատաբերին չի տեղեկացվել:

21.08.2008 թ-ին ընդունվել է «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը, որի 2-րդ հոդվածով սահմանվել է. «Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված իրավունքից օգտվելու համար անհատ ձեռնարկատերը պարտավոր է ներկայացնել գրավոր դիմում իր հաշվառման /գրանցման/ վայրի հարկային տեսչության մարմին»: Այսինքն, անհատ ձեռնարկատերերը պետք է իրազեկվեին գրավոր դիմում ներկայացնելու օրենքի պահանջի մասին: Ընդ որում, իրազեկելու պարտավորությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.10.2008 թ-ի թիվ 1-06/448-Ա հրամանով հաստատված ընթացակարգի համաձայն, դրվել է տարածքային հարկային տեսչությունների վրա:

30.05.2005 թ-ին դադարեցնելով ձեռնարկատիրական գործունեությունը նշված ընթացակարգի համաձայն գանգատաբերը չի ծանուցվել, որ անհրաժեշտ է դիմում ներկայացնել և հանձնել պետական գրանցման վկայականը, մանավանդ, որ վկայականը հանձնելու վերաբերյալ դրույթը գործել է 2006 թ-ից:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը խնդրում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտքի մասով անվավեր ճանաչել Իջևանի ՏՀՏ պետի 18.02.2015 թ-ի թիվ 522 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 17.12.2014 թ-ի դրությամբ նրա չկատարած հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 148.422 դրամ: Պարտքն առաջացել է պարզեցված հարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու արդյունքում:

Պարզեցված հարկի պարտքը կազմում է ընդամենը 47.835 դրամ, որից 28.800 դրամ ապառք, 19.035 դրամ տույժ: Պարտքն առաջացել է 2004 թ-ի 4-րդ, 2005 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակների համար ներկայացված հաշվարկների հիման վրա:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտքը կազմում է ընդամենը 100.587 դրամ, որից ապառք 65.000 դրամ, տույժ 35.587 դրամ: Պարտքն առաջացել է 2011 թ-ի դեկտեմբերից մինչև 2012 թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում նվազագույն սոցիալական վճարների հաշվարկման արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ և 88-րդ հոդվածներով ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը կայացրել է 18.02.2015 թ-ի թիվ 522 որոշումը (այսուհետ նաև Որոշում)՝ Վաղթանգ Պետրոսյանից 148.422 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը 30.05.2005 թ-ին Նոյեմբերյանի ՏՀՏ հայտարարություն է ներկայացրել 31.05.2005 թ-ից գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը 30.05.2005 թ-ին Նոյեմբերյանի ՏՀՏ է ներկայացրել նաև գրավոր դիմում՝ բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունենալու վերաբերյալ

տեղեկանք տրամադրելու մասին: Այնուհետև, ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի կողմից 22.08.2005 թ-ին հրապարակվել է թիվ 1021981 հանձնարարագիրը, որի հիման վրա Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանի մոտ կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության լուծարային ստուգում: Արդյունքում 30.08.2005 թ-ին կազմվել է թիվ 1021981 ակտը, որով լրացուցիչ բյուջե վճարման գումար չի առաջադրվել:

Պարզվեց նաև, որ ՀՀ պետական ռեզիստորի կողմից 17.06.2003 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա077690 վկայականի համաձայն քաղաքացի Վաղթանգ Պետրոսյանը գրանցված է ՀՀ պետական ռեզիստորում որպես անհատ ձեռներեց 17.06.2003 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա077690 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 17.06.2003 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 01.01.2006 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա077690 վկայականում, ինչպես նաև վկայականի ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը 01.01.2006 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, ըստ էության, դադարել են Վաղթանգ Պետրոսյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:


Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ Ա/Ձ Վաղթանգ Պետրոսյանը 30.05.2005 թ-ին Նոյեմբերյանի ՏՀՏ հայտարարություն է ներկայացրել 31.05.2005 թ-ից գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին և գործում առկա չէ որևէ ապացույց 30.05.2005 թ-ից հետո ընկած ժամանակահատվածում նրա կողմից գործունեություն իրականացնելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է, որ 2011 թ-ի դեկտեմբերից մինչև 2012 թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 18.02.2015 թ-ի թիվ 522 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններից նվազեցնել պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջադրված պարտավորությունը՝ գումարով 100.587 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ